ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԷՐԵԲՈՒՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

« _____ » _____ 202 թ.

№ _____

ք. Երևան, Սասունցի Դավթի փող., հ. 87
Հեռ.՝ +(374 11) 518 304
Էլ. փոստ՝ erebouni@yerevan.am

«ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ԱՐՏԱՇԵՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

/Ք. ԵՐԵՎԱՆ, ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆՆԵՐԻ 4 ՓՈՂ Հ. 2/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) միջև 04.05.2023 թվականին կնքված «ԵՔ–ԷԱՃԱՊՁԲ-23/92» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված և ^tender_code^ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությամբ՝ նույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող գնահատված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար...»:

Վերոնշյալ Պայմանագրի N 2 հավելվածով մատակարարման ժամանակացույցի պայմանագրի կատարման ժամկետը սահմանված է պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30-րդ օրացուցային օրը ներառյալ:

Նշված Պայմանագրի 2-րդ մասի 2.1.7 կետի համաձայն գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Նույն պայմանագրի 2-րդ մասի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Երևանի քաղաքապետարանի և «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ միջև 04.05.2023 թվականին կնքված «ԵՔ–ԷԱՃԱՊՁԲ-23/92» գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագրի համաձայն Վաճառողը պարտավոր էր մատակարարել երկու տեսակի մետաղական թիթեղներ /որոնց մանրամասն նկարագրությունը նշված է պայմանագրի տեխանիկական բնութագրում/:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Էական է ճանաչվում կողմերից մեկի թույլ տված պայմանագրի խախտումը, որը հանգեցնում է մյուս կողմի համար այնպիսի վնասի, որն զգալիորեն զրկում է վերջինիս այն բանից, ինչը նա իրավունք ուներ ակնկալել պայմանագիրը կնքելիս»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 469-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Եթե պայմանագրի փոփոխման կամ լուծման համար հիմք է ծառայել կողմերից մեկի թույլ տված պայմանագրի էական խախտումը, մյուս կողմն իրավունք ունի պահանջել հատուցելու պայմանագրի փոփոխմամբ կամ լուծմամբ պատճառված վնասները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Կատարողն իրավունք ունի հրաժարվել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց՝ պատվիրատուի վնասները լրիվ հատուցելու պայմանով»:

Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:

Կնքված պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումը վաճառողի կողմից չի կատարվել: Այդ մասին վերջինիս բազմիցս տեղյակ է պահվել և առաջարկվել է սեղմ ժամկետում կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 14.06.2023թ. հ. 34/106234-23, 03.08.2023թ. հ. 34/142102-23 և 11.08.2023թ. հ. 34/147052 գրությունների պահանջները, հետևաբար Էրեբունի վարչական

շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի /լրիվ/ հրաժարվում է «ՄՍ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊ ընկերության հետ կնքված «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/92» ծածկագրով գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրերը՝ հավելված 3.2 և հավելված 4.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարներից համապատասխանաբար 2,999,814.75 ՀՀ դրամ և 1,999,876.5 ՀՀ դրամ Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

Ընդունել ի գիտություն.

Եթե «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարում է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացվում լիազորված մարմին և եթե մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվում է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,
ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **ՊԵՏՐՈՍ ՍԱՐԳՍՅԱՆ**

Աշխատակազմի գլխավոր
մասնագետ-իրավաբան
Կատ.՝ Հ. Կնյազյան
(0 11)518340